Կ. ՎԱՐԴՈՒՆԻ

# ՍՈՑ ՄՐՑՈՒՄ




Նկարներ
Միեր Աբեղյանի

891.99Մ
Վ-30

ՊԵՏՀՐԱՏ — 1932 — ՅԵՐԵՎԱՆ

09 AUG 2013
891.99Մ ԱՐ
Կ-30
13103

# ՍՈՑՄՐՑՈՒՄ

Աշխատանքի
Նոր մեթոդ,
աշխուժացան
ձեռք ու վոտ,

Հիմա խոսենք
փաստերով.
վորտեղ
ինչպես
ինչ գործով,
Հենց շնորհիվ
սոցմրցման,
Աշխատանքները
թափ առան։

5 ԱՄՅԱԿԸ

Մեծ պլան
պիտ կատարենք
անպայման։
Շատ ճյուղերում
Մենք արդեն
կատարել ենք,
ավարտել։

ՆԱՎԹԻ
ԳՐՈԶՆՈՒՄ
ԿԱՄ ՀԵՆՑ
ԱՆԻ-ՊԵՄԶԱՅՈՒՄ
ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ ԿԱՐԻ
ՏՊԱՐԱՆՈՒՄ
ԱՅՍ ՏԱՐԻ
5
ԱՄՅԱԿԸ ԱՎԱՐՏՎԵՑ։

2011-07

—Ես բանվոր եմ
Այ տեսեք,
Ընկերներով աշխատում
Տրակտոր ենք,



Պատրաստում
Առաջ չորս էր,
Հինգ կամ վեց
Սոց-մրցումը
մեզ տվեց

1007
30076

Վեցի տեղը
Տասյերկու
ու մրցման ենք
հրավիրում,
մրցման կանչում
Մեկ—մեկու...

—Աշխատում եմ
Յես աշխույժ
Մեկ որ գործին
չեկա ուշ
Իմ անունը
վերցրին
գրեցին
կարմիր տախտակին։

—Յես էլ դարբին,
Այ հիմի
պատրաստում եմ
գերանդի.
Պատրաստում եմ
Յես զնդան

Դուրս եմ յեկել
Սոց-մրցման։
Ինձ հետ Սեթոն է աշխա-
տում
Միշտ էլ գործից
ուշանում։

Ու մի անգամ ժողովում
վորոշեցին
Նույն տեղում
Բարձրացնել
սև տախտակին,




Ես Մուկուչը
հյուսնոցում,
աշխատում է
չի հոգնում,
պատրաստում է
դուռ, սեղան,
դպրոցական
նստարան։



Իսկ Սարգիսը՝
նկարիչ.
Իրա գործում
Միշտ կտրիճ
Սոց-մրցման է
Դուրս յեկել
գծում է
լավ նկարներ.
Իսկ Սուրիկը
Դպրոցում,
դասերից իր
ուշանում.
Վահանի հետ
միասին
պայմանագիր
կնքեցին.
Հիմա լավ են
սովորում,
Յերբեք էլ չեն
ուշանում։

## ՀԱՆՔԵՐՈՒՄ

Բա հանքերում
պղնձի,
Ամեն ցեխում,
առանձին,
պայմանագիր
կնքեցին։
Հետո անհատն
անհատի
հետ մրցելով
կաշխատի։




Մուրճով,
Բրչով
բանվորներ
Աշխատում են
անվեհեր
Այդ սոցմրցման
շնորհիվ
Աշխատանքի
լուրջ կռիվ...

## ԴԱՇՏԵՐՈՒՄ

Մեր Սովխոզի
դաշտերում,
կյանքն է աշխույժ
Միշտ յեռում։
Մշակում են
սպիտակ
քուլա, քուլա
լավ բամբակ։



Ծխախոտ են
մշակում,
Թթի ծառեր են տնկում





Առվից, առու,
Մարգ առ մարգ
Ահա մարդիկ
շարք առ շարք
աշխատում են
անդադրում
մեկ-մեկու
չեն խանգարում։
Աշխատում են,
Այս գործում
կիրառում են
Սոցմրցում։

Ժամանակն է
քաղհանել,
Աշխատավոր
բանվորներ
Դուրս են գալիս
Դեպի դաշտ
Ինչպես զինվոր
վաշտ առ վաշտ,
Պայքարում են
Ու մրցում
Յեվ Նոր կյանք են
կառուցում։
Հետո ուրախ
տուն գալիս,



Ու միմյանց
ձայն տալիս,
Թե ով ինչպես
աշխատեց,
պայմանագիր,
կատարեց։

Էս չքավոր
Ոհանը.
Մի յեզ չունի
իր տանը,
Տխուր մենակ
Սա կանգնել
Մտածում է
Ի՞նչ անել.
Ունի մի արտ
բամբակի
Քիչ է մնում,
վոր խեղդվի,
Մոլախոտն է
դուրս յեկել
Ու բամբակից
բարձրացել.
Մենակ Ոհանն
Ի՞նչ անի,
Գնա, հիմա
Ո՞ւմ ասի.

— Այ սովխոզի
բանվորներ,
Այ կոլխոզի
ընկերներ
Մեկ որ յեկեք
միանանք,

Ու Ոհանին
    իմաց տանք
գնանք արտը
    քաղհանենք
    մոլախոտից
    ազատենք։
Հաջորդ օրը
    պահ, պահ, պահ
Նրա արտում Թիվչկա,
    ջղտած
    Թեվեր
    Ու մկան,

Աշխատում են
    ժրաջան։

Իսկ Ոհանը
մտածեց
գրեց դիմում
Ու տվեց,
վոր կոլխոզի
մեջ մտնի,
հանգիստ սրտով
    աշխատի։






Սոց.մրցումը
    Նոր մեթոդ
Աշխուժացնում
ձեռք ու վոտք։
Հանքերում,
դաշտում,
գյուղում,
Գործարանում

հիմնարկում,
Դազգյահի մոտ
Ու մուրճի·
Սոց—մրցումը
Թող լինի։
    Ով սոցմրցման
մեջ մտնի,
Նա կլինի պլտանի,
Թե մեզ
    համար,
Թե յերկրին
    հետո՝
համայն
    աշխարհին...

ՀՀ Ազգային գրադարան
NL0400852

ԳԻՆԸ 75 ԿՈՊ.

13103

К. ВАРТУНИ
СОЦСОРЕВНОВАНИЕ
ГИЗ ССРА ЭРИВАНЬ 1932

Պետհրատ № 2029 Հրատարակ. 7189 (բ) Տիրաժ 5000
Վիմ Պետհրատի Տպար. № 593